

Ճշմարիտ երկրպագության կողմը կանգնիր — Մաս 1

Հիմնված է «Ի՞նչ է սովորեցնում Աստվածաշունչը իրականում» գրքի 16-րդ գլխի վրա: Առկա է jw.org կայքում:

ՆՊԱՏԱԿԸ: Ինքնաքննություն անել և հասկանալ, թե որոնք են քո համոզմունքները, և ինչու ես դրանց հավատում: Քննել, թե ինչ է սովորեցնում Աստվածաշունչը, և տեսնել, թե ինչպես կարող ես քո համոզմունքները բացատրել ուրիշներին:



Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԸ ԿԱՆԳՆԵԼ

1 ՈՐՆ Է ՔՈ ՀԱՄՈՋՄՈՒՆՔԸ

Ի՞նչ գուցե ասեն ոմանք:

Իսկ դո՞ւ ինչ կասես:

Ինչո՞ւ ես դրան հավատում:

2

ԻՆՁ Է ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ


Ճշմարիտ երկրպագության կողմը կանգնել նշանակում է բացարձակ նվիրվածություն դրսևորել Եհովայի հանդեպ:
(Տես «Աստվածաշունչը սովորեցնում է» գրքի 16-րդ գլխի 1–5-րդ պարբերությունները)

Կարդա Ելք 20:4, 5 և 1 Հովհաննես 5:21

Այս համարներն ինչպե՞ս են բացահայտում Աստծու տեսակետը երկրպագության մեջ պատկերներ գործածելու վերաբերյալ:

Կարդա 2 Օրենք 18:10–12

Այս համարներն ինչպե՞ս են բացահայտում Աստծու տեսակետը նախնիներին երկրպագելու վերաբերյալ, ինչը ոգեհարցության ձևերից է:



Ինչպես որ չես ուտի կեղտոտ տեղում ընկած կոնֆետը, այնպես էլ չես մասնակցի հեթանոսական ակունքներ ունեցող տոնակատարություններին

**Ճշմարիտ երկրպագության կողմը կանգնել նշանակում է նաև մերժել
այն տոները, որոնց Եհովան հավանություն չի տալիս:**
(Տես «Աստվածաշունչը սովորեցնում է» գրքի 16-րդ գլխի 6–12-րդ պարբերությունները)

Կարդա Ծննդոց 40:20 և Մարկոս 6:21

Ի՞նչ ենք հասկանում այն բանից, որ Աստվածաշնչում հիշատակված ծննդյան տոնակատարության երկու դեպքն էլ կապված է Եհովային չերկրպագող մարդկանց հետ:

Կարդա Եսայիա 52:11 և Եփեսացիներ 5:10

Ինչո՞ւ է կարևոր իմանալ, թե որտեղից են ծագել կրոնական տոները:

Ինչո՞ւ ես վճռել ճշմարիտ երկրպագության կողմը կանգնել:

3

ԲԱՅԱՏՐԻ ՔՈ ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԸ

ԵԹԵ ԱՍԵՆ...

Ես պատկերների չեմ երկրպագում: Դրանք պարզապես օգնում են ինձ ավելի մոտ զգալու Աստծուն, երբ աղոթում եմ նրան:

ԿԱՐՈՂ ԵՍ ԱՍԵԼ...

Լավ է, որ ցանկանում եք մոտենալ Աստծուն աղոթքի միջոցով: Սակայն պատկերներ գործածելը այլ հարց է, քանի որ...

Աստվածաշնչից ո՞ր համարը կկարդաս նրա համար:

Ի մտի ունենալով նրա տեսակետը՝ ինչպե՞ս կբացատրես այդ համարը:

ԵԹԵ ԱՍԵՆ...

Այսօր ոչ ոք ծննդյան և այլ տոներ նշելիս չի մտածում, որ դրանք հեթանոսական ծագում ունեն: Դրանք պարզապես առիթներ են ընտանիքով հավաքվելու:

ԿԱՐՈՂ ԵՍ ԱՍԵԼ...

Ընտանիքի հետ ժամանակ անցկացնելը կարևոր է, բայց ես կարծում եմ, որ կարևոր է նաև իմանալ, թե ինչ ակունք ունեն տոնակատարությունները, քանի որ...

Աստվածաշնչից ո՞ր համարը կկարդաս նրա համար:

Ի մտի ունենալով նրա տեսակետը՝ ինչպե՞ս կբացատրես այդ համարը:
